ԱՐՁԱՆԱԳՈՐԾԻ ՁԱՅՆԸ

Ձայնը անհատականությունն է:

Օսիպ Մանդելշտամ

Արձանագործ Արտո Չաքմաքչյանի սկիզբը վայել ու պատշաճ էր իր հետագա ընթացքին ու ճանապարհին: Նա սկսել է այնտեղից, «ուստի արժանէ սկսանել»: Տարիներ շարունակ շրջել է Հայաստանում, ի մոտո ճանաչել հնավայրերն ու հնագույն կառույցները, որոնել, գտել մեր նախնի արձանագործության նմուշները: Երիտասարդ արվեստագետը հանգամանորեն ուսումնասիրում է հայ հին քանդակագործական արվեստի սկզբունքներն ու օրինաչափությունները, ջանալով թափանցել հին քարգործ վարպետների արվեստի գաղտնիքների մեջ: Հին վարպետների գործերում նա զարմանքով հայտնաբերում է ստեղծագործական մտածողության, կերպավորումի և պատկերման այնպիսի օրինաչափություններ, այնպիսի մոտեցումներ նյութին ու առարկային, որպիսիք քսաներորդ դարում միայն պետք է արմատավորվեին եվրոպական նշանավոր արվեստագետների գործերում իբրև միանգամայն նոր, արվեստում հեղաշրջող մտածողության դրսևորում, իբրև նորարարական-ավանգարդիստական մտածողության աննախադեպ արտահայտություն:

Ճիշտ ճանապարհը, ճիշտ ուղին արդեն գտնված էր: Երիտասարդ արվեստագետի հոյակապ ընթացքը սկիզբ առավ ու վայելչորեն շարունակվեց այդ ճանապարհով, հայ հնագույն արվեստի բարձր ավանդույթների պահպանման ու խորացման ճանապարհով: Հանրությանը ներկայացված իր առաջին իսկ գործերով նա մերժում է գորշ, պարտադրվող ճաշակը, կեղծ ակադեմիականի ու գռեհիկ նատուրալիզմի, բնության ու առարկայի անհոգի պատճենումի ու նմանակումի մտայնությունը, վճռականորեն հրաժարվում է կերպարի ու առարկայի հավասար-միահարթ մակերեսներով, թվում է՝ դասականորեն անթերի ու իդեալականացված պատկերումներից:

Արձանագործը նոր արտահայտչաձևեր է որոնում, որոնք իրեն՝ հեղինակին, ինչպես նաև դիտողին առարկայի մակերեսից պետք է տանեին դեպի առաջին հայացքից չերևացող խորքը, ներքին էությունը, ներաշխարհը։

Հազվադեպ է պատահում, որ արվեստագետը ասպարեզ մտնի միանգամայն հասուն, կատարյալ աշխատանքներով։ Արտո Չաքմաքչյանի՝ 1960-ական թվականների գործերը արդի հայ քանդակագործության այլևս դասական նմուշներ են, նշանային-նշանավոր գործեր, որոնք կատարելապես իրենց մեջ ներառել, կերպավորել ու պահել են ժամանակի բնութագիրն ու նկարագիրը, իմաստն ու գույները։ Իր կերտած քանդակները՝ հորինվածքներն ու դիմանկարները, գեղարվեստական բացառիկ ու մնայուն արժեքներ են և մեր արդի արվեստի իսկական հարստությունը. «Մոր դիմաքանդակը»՝ կարելի է ասել՝ հայ բոլոր մայրերի հավաքական կերպարը, «Առնո Բաբաջանյանը»՝ մարդը, երաժիշտը, քաղաքացին, «Հարություն Կալենցը»՝ ողողանջող գունարվեստի կախարդը և մոգը, «Կոստան Զարյանը»՝ երկրներ և աստվածներ տեսած ու ճանաչած մարդը, որի ներաշխարհը, ինչպես դիմաքանդակն է ասում, լեցուն է ալեկոծվող հրաշեկ լավայով...

Այդ տարիները մեր ազգային ինքնագիտակցության արթնացման և մեր ազգային ոգու վերելքի ժամանակներն էին։ Ասպարեզ էին մտել տաղանդավոր և առանձնապես օժտված մի խումբ արվեստագետներ, որոնց վիճակված էր նոր խոսք ասել և նոր բարձունքների հասցնել հայ արվեստը։ Նրանք բացառիկ տաղանդի և ամբողջական նկարագրի տեր զորեղ անհատականություններ էին և նրանցից մեկը, անշուշտ, Արտո Չաքմաքչյանն էր։ Այդ տարիների նրա գրեթե բոլոր գործերը՝ այնքան խորհրդանշանական ու խորհրդավոր «Երեք մատը» (1965), այլախոհական հստակ շեշտվածությամբ «Ազատությունն» (1965) ու «Մտածողը» (1965), մյուսները, վկայում էին քանդակագործի անառարկելի տաղանդն ու արվեստի ուժը։ Եվ, իհարկե, իր «Կոմիտասն» ու իր «Նարեկացին», մեր ժողովրդի ճակատագրի և էության մեծ մարմնացումները... Իր «Կոմիտասը» մեր ազգային ինքնության, մեր ինքնագիտակցումի վսեմ ու ոգեկան դրսևորումներից մեկն է, իր «Նարեկացին»՝ հայ

ստեղծագործական մտքի ու կարողության գովքը։ Արվեստագետը դեպի այս խորհրդանիշ-կերպարները ընթացել էր երկար ու համառ որոնումների ու խորունկ իմաստավորումների ճանապարհով... Նույն այս տարիներին Արտո Չաքմաքչյանը ստեղծում է իր ժամանակակիցների՝ Հայաստանի հանրային, գրական ու մշակութային կյանքի գործիչների քանդակային ու գրաֆիկական դիմանկարների մի հոյակապ, անկրկնելի պատկերասրահ։

Հետո եկավ ուրիշ մի ժամանակ, երբ մարդու շուրջը հետզհետե խտացող-թանձրացող օդը կյանքը դարձնում է ավելի անձուկ, իրականությունը՝ ճնշիչ, կաշկանդող, անել... Վրա է հասնում ելքի ժամանակը... Քանի՛-քանիսին արտաքսեցին կայսրությունից, քանի՛-քանիսը իրենք հեռացան... Եվ մեծ տարագրի շնորհակալության խոսքը սրտում՝ «Երախտապարտ եմ, օ՜ իմ երկիր, քո հասցրած ցավի ու վերքերի համար», Արտո Չաքմաքչյանը 1975 թվականին գնում է հաստատվելու Կանադայում։

Կենսական նոր միջավայրում և ստեղծագործական նոր տարածության մեջ արվեստագետը շարունակում է ընթանալ խորացումների և ներքին բովանդակության հարստացման ճանապարհով, իրագործում է հանդուգն ու համարձակ մտահղացումներ, ավելի խոսուն և արտահայտիչ դարձնելով ձևածավալների լեզուն, նվազագույնի հասցնելով թեմայի, նյութի այսպես կոչված «գրական-պատմողական» գիծը։ Այս շրջանում ստեղծված իր գործերը հետզհետե դառնում են ավելի խորհրդանշանական ու կերպարային, արտահայտչամիջոցները՝ զուսպ, լակոնիկ, ընդհանրական, բայց՝ խոսուն ու իմաստալից («Վերջին դատավճիռը», 1979, «Մեկը և մյուսները», 1979, «Մեռնող զինվորը», 1983)։ Արձանագործը ինքնօրինակ մոտեցում ունի մեր դարի հանրությունների կազմակերպման ձևերին և էությանը («Ամբոխը և իր կուռքը» շարքը), միանգամայն անսպասելի լուծումներ է տալիս հին ու ծանոթ թեմաներին («Անառակ որդու վերադարձը», «Խաչելություն» շարքերը, «Ողբ», 2000)։ Արտո Չաքմաքչյանի արվեստը հետզհետե ձեռք է բերում նոր երանգներ, իր հորինվածքներում ու դիմաքանդակներում որոշակիորեն ընդգծվում են առարկաների,

տարածության, ժամանակի, առհասարակ իրականության փիլիսոփայական-մետաֆիզիկական ընկալումներն ու մեկնաբանությունները («Ժամանակի միջով», 1990, «Տարածության միջով», 1990, «Վտանգված վիճակ», 1998, «Ողբ», 2001): Կանադական կյանքի իր շրջանը հարուստ է անառարկելի հաջողություններով: Անհատական ցուցահանդեսներ է բացում Մոնրեալում, Տորոնտոյում, Փարիզում և այլուր, որոնք մեծ արձագանքներ են ունենում, մեծածավալ քանդակներ է տեղադրում զանազան քաղաքներում (չորս մետրանոց «Կոմիտասը» Դետրոյտում, նույն չափի «Վերածնունդը» Տորոնտոյում, գրեթե նույն չափի «Հույսը» Մոնրեալում և այլն), իր բնորդներն են դառնում համբավավոր մարդիկ՝ փիլիսոփաներ Լեշեկ Կոլակովսկին, Ալեն Մոնտեֆիորին, Ժան-Ֆրանսուա Լիոտարը, Չարլզ Թեյլորը, Ռեյմոնդ Կլիբանսկին և ուրիշներ, Մեծ Բրիտանիայի Արքայական ակադեմիայի պատվերով ստեղծում է Նոբելյան մրցանակի դափնեկիր բժիշկ Պետեր Մեդավարի քանդակը (1980), շահում է հայտնի դիրիժոր Վիլֆրիդ Պելետիեի արձանի համար հայտարարված մրցանքը (արձանը տեղադրվում է Մոնրեալի Արվեստների հրապարակում 1984-ին), Հայդելբերգի Գիտությունների ակադեմիայի համար ստեղծում է Հանս-Գեորգ Գադամերի կիսանդրին... Թվարկումը կարելի է երկար շարունակել: Մամուլը, արվեստաբանական միտքն ու միջավայրը միշտ բարձր են գնահատել Կանադայի Գեղարվեստների ակադեմիայի անդամ Արտո Չաքմաքչյանի արվեստն ու գործերը:

Արվեստագետը տասնամյակների ընթացքում ստեղծել է նաև հոյակապ նկարչություն, իր տարածական-քանդակային մտածողությունը գծային ինքնօրինակ արտահայտչականության կերպափոխած բարձրարվեստ գրաֆիկա:

Արվեստագետը մշտապես ասելիք ունի, նա խոսում է, անկախ այն բանից՝ իրեն լսում են, թե չեն լսում: Նա խոսք է ասում, և իր արվեստը իր հստակ ու հաստատուն ձայնն է, որը տաղանդի ուժով բառը, խոսքը կարող է վերածել հանուն մարդկության, հանուն կյանքի մաքրության ու մարդկային արդարության արձակված հոգեկան կանչի ու հզոր աղաղակի («Ճիչ», 1999): Եվ հանուն մարդու ասված այդ խոսքը, այդ զորեղ ճիչը Արտո Չաքմաքչյանի արվեստի հիմնական խոսքն է, ասելիքը, բովանդակությունը:

Ամեն մի իրավ քանդակագործ երազում է հասնել իսկական վարպետության, մեծ արտահայտչականության, ուժի, թափի ու խորքի... Շատերն են ձգտում դրան, բայց դա տրվում է քչերին: Եվ արվեստների աստվածը արդարորեն ամեն մեկին տալիս է -տվել է իր ձիրքի ու շնորհքի, իր օժտվածության ու տաղանդի համեմատ:
Արտո Չաքմաքչյանին՝ առավել չափով...

Երվանդ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ